ԵԴ1/3805/01/24
(ՀԿԴ/0250/01/25)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3 հոկտեմբերի 2025 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ1/3805/01/24 (ՀԿԴ/0250/01/25) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի սեպտեմբերի 19-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2024 թվականի դեկտեմբերի 18-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Վիգեն Ալեքսանդրի Սարգսյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ 69136524 (ԵԴ1/3805/01/24) քրեական վարույթը՝ հեռակա կարգով դատաքննություն իրականացնելու միջնորդությամբ:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Ս.Անդրեասյան) 2024 թվականի դեկտեմբերի 23-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/3805/01/24 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2025 թվականի հուլիսի 15-ին թիվ ԵԴ1/3805/01/24 քրեական վարույթը վերաբաշխվել է դատավոր Մ.Արամյանին:

1.2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հուլիսի 17-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/3805/01/24 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, 2025 թվականի սեպտեմբերի 9-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/3805/01/24 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին:

3. Հակակոռուպցիոն դատարանը (դատավոր Գ.Հովհաննիսյան) 2025 թվականի սեպտեմբերի 19-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0250/01/25 (ԵԴ1/3805/01/24) քրեական վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի սեպտեմբերի 23-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Վիգեն Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«(…) նա, հանդիսանալով պետական ծառայող, հանցավոր արարքների արդյունքում ստացել է օրինական եկամուտներով չհիմնավորված, ապօրինի՝ առանձնապես խոշոր չափերի՝ 99.414.079 ՀՀ դրամ գումար, ապա դրա հանցավոր ծագումը թաքցնելու և խեղաթյուրելու նպատակով նշված գումարը փոխարկել է անշարժ գույքերի՝ այդ կերպ օրինական տեսք*

հաղորդելով դրանց և կատարելով փողերի լվացում, որպիսի գործողությունները դրևորվել են հետևյալում:

Այսպես.

Վիգեն Սարգսյանը 1995-1998 թվականներին աշխատել է ՀՀ Ազգային ժողովում՝ որպես նախագահի օգնական, ապա խորհրդական, 1998-2000 թվականներին սովորել և ավարտել է ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի «Մեդֆորդի Թավթս» և «Հարվարդի» համալսարանները, 2000-2003 թվականներին զորակոչվել է զինվորական ծառայության՝ որակավորվելով որպես պահեստազորի սպա, 2001-2011 թվականներին աշխատել է Հայաստանի ամերիկյան համալսարանում՝ որպես դասախոս, 2003-2009 թվականներին զբաղեցրել է ՀՀ նախագահի օգնականի, 2009-2011 թվականներին՝ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալի, 2011 թվականի հոկտեմբերի 17-ից մինչև 2016 թվականի հոկտեմբերի 3-ը՝ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի պաշտոնները, իսկ 2016 թվականի հոկտեմբերի 3-ից մինչև 2018 թվականի մայիսի 11-ը պաշտոնավարել է ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնում:

*Վիգեն Սարգսյանը, 2006 թվականի դրությամբ զբաղեցնելով ՀՀ նախագահի օգնականի պաշտոնը, հանդիսանալով պետական ծառայող, մտերիմ փոխհարաբերությունների մեջ է գտնվել Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի կառուցապատում իրականացնող, «********-********» և «********** **********» ՍՊ ընկերությունների սեփականատեր և տնօրեն ******** ********** հետ: Նույն ժամանակահատվածում****** ************ հետ համաձայնություն է ձեռք բերել՝ գույքի իրական արժեքից էապես տարբերվող ցածր արժեքի արտահայտմամբ բնակարան ձեռք բերելու հարցի շուրջ: Դրանից հետո՝ 2006 թվականի հոկտեմբերի 26-ին, Վիգեն Սարգսյանը ****** ************ պատկանող «******-*****» ՍՊ ընկերությունից 23.600.000 ՀՀ դրամ պայմանագրային արժեքով ձեռք է բերել 118 քմ մակերեսով ******** ********** ******** *-** ***** **-** բնակարանը, իսկ 2008 թվականի հոկտեմբերի 24-ին՝ 6.000.000 ՀՀ դրամ պայմանագրային արժեքով ձեռք է բերել **** ***** թիվ ** ավտոկայանատեղին:*

*Վիգեն Սարգսյանի և նրա կնոջ՝ ******** *********** ստացած աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների, ինչպես նաև իրականացված ծախսերի ու*

կատարված վճարումների հարաբերակցության արդյունքում 2013 թվականի ապրիլի 30-ի դրությամբ նրանց օրինական եկամուտների մնացորդը կազմել է 585.921 ՀՀ դրամ:

*Նման պայմաններում Վիգեն Սարգսյանը, զբաղեցնելով ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի պաշտոնը, 2013 թվականին նպատակադրվել է ****** ********* փաստացի պատկանող՝ ******* ******** ******* ******** *_** ******** ** և **-** բնակարանները, ինչպես նաև **** ****** թիվ *** և *** ավտոկայանատեղիները քաղաքացիաիրավական գործարքներով ձեռք բերելու եղանակով օրինականացնել իր և կնոջ օրինական եկամուտներով չհիմնավորված, հանցավոր ճանապարհով ստացված՝ առանձնապես խոշոր չափերի՝ 99.414.079 ՀՀ դրամը: Հանցավոր մտադրությունն իրականացնելու համար Վիգեն Սարգսյանը, նախնական համաձայնության գալով ******* ********** հետ, 2013 թվականի ապրիլի 30-ին վերջինիս հետ կնքել է ****** ******* ******* ******** **_*** ******** **-** բնակարանը և ***** ***** *** * ավտոկայանատեղին՝ ընդհանուր 160.000.000 ՀՀ դրամով նրան վաճառելու վերաբերյալ ձևական պայմանագրեր՝ այդ կերպ գործարքի կնքման արդյունքում ստացած եկամուտների ձևով օրինական տեսք տալով նշված գումարի մեջ ներառված, հանցավոր ճանապարհով ստացված՝ 99.414.079 ՀՀ դրամին՝ թաքցնելով դրա ծագման աղբյուրը, իրական բնույթը, տեղաշարժը, պատկանելիությունը, տնօրինման եղանակը՝ հանցավոր ծագում ունեցող հիշյալ գումարը ձևական պայմանագրերի կնքման արդյունքում դնելով օրինական քաղաքացիական շրջանառության մեջ: Նշված քաղաքացիաիրավական գործարքների արդյունքում հանցավոր ճանապարհով ստացված՝ 99.414.079 ՀՀ դրամն իբրև օրինական եկամուտ օգտագործելով՝ Վիգեն Սարգսյանը նույն օրը 100.000.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով իր և կնոջ անվամբ ձեռք է բերել ******** ********** փաստացի պատկանող, վերջինիս մերձավոր ազգականների անվամբ հաշվառված՝ ***** ****** ******* **** *_*** ***** *** և ***_*** բնակարանները, ինչպես նաև նույն շենքի թիվ ** և *** ավտոկայանատեղիները, որպիսի գործողություններով իր ունեցած հանցավոր ծագում ունեցող առանձնապես խոշոր չափերով դրամական միջոցները փոխարկել է անշարժ գույքերի և թաքցրել դրանց հանցավոր ծագումը:*

*Այնուհետև՝ 2018 թվականի մայիսի 17-ին, Վիգեն Սարգսյանը ***** ********** հետ կնքել է առուվաճառքի ձևական բնույթ կրող նոր պայմանագրեր, որոնցով իբրև ընդհանուր 56.000.000 ՀՀ դրամ արժեքով հետ է գնել դեռևս 2013 թվականի ապրիլի 30-ին 160.000.000 ՀՀ դրամով վաճառած՝ ********** ********** **** ***** **_** **** **_** բնակարանը և **** **** ** ավտոկայանատեղին:*

*Այսպիսով, սույն քրեական վարույթով ձեռք բերված ապացուցողական զանգվածով, այդ թվում՝ նաև ապացույցների համակցության համադրման և վերլուծության արդյունքում հաստատվել է, որ Վիգեն Սարգսյանը 1995-2018 թվականների ընթացքում հանդիսանալով պետական ծառայող, հանցավոր արարքների արդյունքում ստացել է օրինական եկամուտներով չհիմնավորված՝ ապօրինի առանձնապես խոշոր չափերի դրամական միջոցներ, ապա դրանք օրինական քաղաքացիական շրջանառության մեջ ներդնելու, այն է՝ անշարժ գույքեր ձեռք բերելու միջոցով փոխարկել, խեղաթյուրել, թաքցրել է դրանց հանցավոր ծագումը, տեղաշարժն ու պատկանելիությունը՝ այդ կերպ օրինական տեսք հաղորդելով դրանց, իսկ ********** ********** իր գործողություններով օժանդակել է նրան, որպեսզի խուսափի կատարած հանցանքի համար պատասխանատվությունից:*

Այսպիսով, Վիգեն Սարգսյանը վերը նկարագրված եղանակով օրինականացրել (լվացել) է հանցավոր ճանապարհով ստացված՝ իր և կնոջ օրինական եկամուտներով չհիմնավորված առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 99.414.079 ՀՀ դրամի գույքը (…)»[1]*:*

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը գտնում է, որ ընդդատության հարցը որոշելիս էական նշանակություն ունի մեղադրանքի փաստական նկարագիրը, քանի որ այն իր մեջ պետք է ներառի և դրանում պետք է արտացոլվեն մեղսագրվող արարքի բոլոր*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 12, թերթեր 265-267:

հատկանիշները, հանցակազմի տարրերը, այն որակյալ դարձնող յուրաքանչյուր հանգամանքները:

(…)

Ըստ մեղադրանքի փաստական նկարագրության, առնվազն այս փուլում, առանց ապացույցների հետազոտման, հնարավոր չէ միանշանակ դատողություն անել այն մասին, որ թիվ ԵԴ1/3805/01/24 քրեական գործով մեղադրյալ Վիգեն Սարգսյանը մեղսագրվող արարքը չի կատարել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով (պաշտոնեական դիրքն օգտագործելով), քանի որ մեղադրանքի նկարագիրը հստակ նախատեսում է, որ մեղադրյալը ենթադրաբար կատարել է հանցանք հենց համապատասխան պաշտոնատար անձ լինելով և այդ հանգամանքը արտացոլվել է մեղադրանքի որոշման մեջ, ինչը չի կարող աննպատակ լինել:

Արդյունքում մեղադրանքի ձևակերպման փաստական կազմի պարագայում առնվազն այս փուլում անկողմնակալ դիտորդի մոտ կարող է ձևավորվել ողջամիտ պատկերացում, որ վերջինիս վերագրված ենթադրյալ արարքը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, նշված հանգամանքի մասին վկայող նշում առկա է ինչպես քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ, այնպես էլ մեղադրական եզրակացությունում:

Նման պարագայում արդեն իսկ առաջադրված մեղադրանքի փաստական նկարագրության համեմատական վերլուծության պարագայում ստեղծվում է միանշանակ պատկեր, որ սույն ենթադրյալ հանցանքի կատարումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ մեղադրյալը հենց եղել է պետական ծառայող և այդ կարգավիճակով պայմանավորված ենթադրաբար ստացել է ենթադրաբար ապօրինի եկամուտ և իր կարգավիճակով պայմանավորված դրանք ենթադրաբար ապօրինի «լվացել» է:

(…)

Այսպիսով՝ վերոգրյալ եզրահանգումների պայմաններում հարկ է արձանագրել, որ մեղադրյալ Վիգեն Սարգսյանի մեղադրանքի որոշումից բխում է, որ նրան մեղսագրվում է կամ պաշտոնեական դիրքն օգտագործելով, իշխանական կամ

ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով ենթադրյալ արարքի կատարում:

Վերոնշյալ հանգամանքների առկայության պայմաններում սույն քրեական գործի քննությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի վարույթում կարող է անկողմնակալ դիտորդի մոտ ստեղծել պատկեր՝ քրեական գործի սխալ ընդդատության, իսկ հետագայում այդ փաստի ամրապնդման և հաստատման դեպքում կարող է արձանագվել, որ սույն քրեական գործը քննվել է ոչ օրինական դատարանի կողմից, ինչը հանգեցնելու է բացասական հետևանքների, քրեադատավարական նորմերի էական խախտման հիմքով դատական ակտի բեկանմանը:

Ամփոփելով վերոնշյալը՝ Դատարանը գտնում է, որ առնվազն այս փուլում գնահատման ենթակա հանգամանքների պարագայում ստեղծվում է պատկեր, որ թիվ ԵԴ1/3805/01/24 քրեական գործն ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին (...)»[2]*:*

7. Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի սեպտեմբերի 19-ի որոշման համաձայն՝ *«(...) Դատարանն արձանագրում է, որ՝*

1) ներկայացված մեղադրանքի իրավական գնահատականի մասով՝

- մեղադրյալ Վիգեն Սարգսյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, որը համապատասխանում է 2022 թվականի հուլիսի 01-ից գործող ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին, որը, համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ի, չի համարվում կոռուպցիոն հանցանք.

2) ներկայացված մեղադրանքի փաստական հիմքի մասով՝

- Վիգեն Սարգսյանին ներկայացված մեղադրանքների փաստական հիմքի ուսումնասիրությամբ ակնհայտ է դառնում, որ ներկայացված մեղադրանքում գոյություն չունի որևէ ձևակերպում առ այն, որ մեղադրյալ Վիգեն Սարգսյանն իրեն մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքը կատարել է պաշտոնեական դիրքն

---

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 14, թերթեր 88-91:

օգտագործելով (…) և/կամ՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով (…).

և գտնում է, որ թիվ ՀԿԴ/0250/01/25 (ԵԴ1/3805/01/24) քրեական վարույթը, ըստ մեղադրանքի

- Վիգեն Ալեքսանդրի Սարգսյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, որը համապատասխանում է 2022 թվականի հուլիսի 01-ից գործող ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին.

ընդդատյա է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի քրեական դատարանին:

Անդրադառնալով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի քրեական դատարանի (…) դիտարկումներին, որ (…) [դրանք ա]մենևին էլ չեն վկայում այն մասին, որ անձն իրեն մեղսագրված ենթադրյալ հանցավոր արարքը կատարել է «պաշտոնեական դիրքն օգտագործելով» (…) և/կամ՝ «իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով» (…) ճիշտ է, ներկայացված մեղադրանքի փաստական հիմքում առկա է այնպիսի ձևակերպում, ինչով պայմանավորված առաջին հայացքից կարող է ենթադրություն առաջանալ, որ անձը ստացել է օրինական եկամուտներով չհիմնավորված, ապօրինի՝ առանձնապես խոշոր չափերի՝ 99.414.079 ՀՀ դրամ գումար պաշտոնեական դիրքն օգտագործելու եղանակով կատարված ապօրինի գործողությունների հետևանքով, սակայն նշվածի վերաբերյալ առկա չէ որևէ իրավական գնահատական և փաստական նկարագրություն, բացի այդ անձն օրինական եկամուտներով չհիմնավորված, ապօրինի՝ առանձնապես խոշոր չափերի՝ 99.414.079 ՀՀ դրամ գումար կարող է ստանալ թեև իր պաշտոնավարման ժամանակահատվածում, սակայն կատարված գործողությունները չհանդիսանան կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցագործություններ. Օրինակ՝ հափշտակություն առանց «պաշտոնեական դիրքն օգտագործելով» կամ «իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով»:

Բացի այդ Դատարանն արձանագրում է նաև, որ անհիմն է նաև այն դիտարկումը, որ մեղադրյալը, լինելով պաշտոնատար անձ իր կարգավիճակով պայմանավորված կատարել է իրեն մեղսագրված ենթադրյալ հանցավոր արարքը, քանի որ, ինչպես նաև արդեն իսկ նշվել է, ներկայացված մեղադրանքի փաստական հիմքի մեջ նշվածը վկայող որևէ նկարագրություն առկա չէ, ավելին՝ համաձայն ներկայացված մեղադրանքի՝

*«Վիգեն Սարգսյանը (...) մտերիմ փոխհարաբերությունների մեջ է գտնվել Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի կառուցապատում իրականացնող, «Պրոգրես-Արմենիա» և «Լոկալ Դեվելոփրզ» ՍՊ ընկերությունների սեփականատեր և տնօրեն ****** ********** հետ».*

ինչը վկայում է անձանց միջանձնական հարաբերությունների մասին, որը չի կարող գնահատվել «պաշտոնական դիրքն օգտագործելով» կամ «իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով» քրեական օրենսգրքով նախատեսված արարքի որակյալ հատկանիշ դարձնող գնահատականին և դասվել կոռուպցիոն բնույթի հանցագործությունների շարքին:

Ամփոփելով վերոգրյալը Դատարանն արձանագրում է, որ՝

1) առկա չէ «փողերի լվացման»-ը նախորդող կոռուպցիոն բնույթի որևէ ենթադրյալ հանցավոր արարքի կատարման վերաբերյալ իրավական գնահատական կամ փաստական հիմք.

2) ներկայացված մեղադրանքի փաստական նկարագրության մեջ առկա չէ պաշտոնական դիրքն օգտագործելու կամ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու եղանակով արարքի կատարումը վկայակոչող որևէ ձևակերպում.

և գտնում է, որ թիվ ՀԿԴ/0250/01/25 (ԵԴ1/3805/01/24) քրեական վարույթը՝ ըստ մեղադրանքի՝

- Վիգեն Ալեքսանդրի Սարգսյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, որը համապատասխանում է 2022 թվականի հուլիսի 01-ից գործող ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին. ընդդատյա է Երևան քաղաքի

առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, այսինքն առկա է ընդդատության մասին վեճ, որը լուծելու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ վճռաբեկ դատարանին (…)»[3]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/3805/01/24 (ՀԿԴ/0250/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ*

---

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 15, թերթեր 4-18:

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»[5]:

11. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[6]:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, ինչպես նաև դատական երաշխիքների բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ, այդ թվում՝ դատական երաշխիքների վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Նախնական դատաքննությունների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

13. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ Վ.Սարգսյանին ներկայացված մեղադրանքի համաձայն՝ վերջինս ենթադրյալ հանցանքը կատարել է լինելով պաշտոնատար անձ, գտել է, որ նրան մեղսագրվում է *«պաշտոնեական դիրքը»* կամ *«իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն»* օգտագործելով ենթադրյալ հանցանքի կատարում[7]:

- Հակակոռուպցիոն դատարանը, արձանագրելով, որ Վ.Սարգսյանին ներկայացված մեղադրանքի փաստական նկարագրության մեջ առկա չէ *«պաշտոնեական դիրքը»* կամ *«իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն»* օգտագործելու եղանակով ենթադրյալ հանցանքի կատարումը վկայակոչող որևէ ձևակերպում, գտել է, որ սույն վարույթն ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին[8]:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ մեղադրյալ Վ.Սարգսյանին ներկայացված մեղադրանքի ձևակերպումից հետևում է, որ վերջինս 1995-2018 թվականների ընթացքում **հանդիսանալով պետական ծառայող** (զբաղեցրել է ՀՀ Ազգային ժողովի նախագահի օգնականի, խորհրդականի, ՀՀ նախագահի օգնականի, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալի, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի, ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնները**)**, ենթադրյալ հանցավոր արարքների արդյունքում ենթադրաբար ստացել է օրինական եկամուտներով չհիմնավորված՝ ապօրինի, առանձնապես խոշոր չափերի դրամական

---

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

միջոցներ, ապա դրանց հանցավոր ծագումը թաքցնելու և խեղաթյուրելու նպատակով, նշված դրամական միջոցները ենթադրաբար փոխարկել է անշարժ գույքերի՝ այդ կերպ օրինական տեսք հաղորդելով դրանց և կատարելով փողերի լվացում:

Նման պայմաններում, հաշվի առնելով, որ Վ.Սարգսյանը ենթադրյալ հանցանքները կատարելիս հանդիսացել է պաշտոնատար անձ, գտնում ենք, որ վերջինիս վերագրված ենթադրյալ հանցանքներն իրենց բնույթով կոռուպցիոն են, հետևաբար, առկա է սույն վարույթը Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու հիմքը:

15. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/3805/01/24 (ՀԿԴ/0250/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր չէ:

16. Հետևաբար, գտնում ենք, որ թիվ ԵԴ1/3805/01/24 (ՀԿԴ/0250/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Վիգեն Ալեքսանդրի Սարգսյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ ԵԴ1/3805/01/24 (ՀԿԴ/0250/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ